



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238,

2-38, [ss@ysmu.am](mailto:ss@ysmu.am)

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետի 10-րդ, 12-րդ ենթակետերը.

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաշվի առնելով ուրուլոգիայի և անդրուլոգիայի, բժշկական մանրէաբանության, ֆարմակոգնոզիայի, կլինիկական ֆարմակոլոգիայի ամբիոնների վարիչների, ՌԲՖ ռազմադաշտային թերապիայի, ՌԲՖ ռազմադաշտային վիրաբուժության ամբիոնների պետերի, ինչպես նաև ուրուլոգիայի և անդրուլոգիայի ամբիոնի պրոֆեսորների ընտրության հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը, հաստատել ընտրությունների հետևյալ արդյունքները՝

1) որպես ուրուլոգիայի և անդրուլոգիայի ամբիոնի վարիչ ընտրված համարել Արմեն Աբգարի Մուրադյանին (23-01-01-01).

2) որպես բժշկական մանրէաբանության ամբիոնի վարիչ ընտրված համարել Կոնստանդին Ղուկասի Մանուկյանին (23-01-01-02).

3) որպես ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ ընտրված համարել Նաիրա Բաբկենի Չիչոյանին (23-01-01-03).

4) որպես կլինիկական ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ ընտրված համարել Նարինե Ռուբենի Միրզոյանին (23-01-01-04).

5) որպես ՌԲՖ ռազմադաշտային վիրաբուժության ամբիոնի պետ ընտրված համարել Կամո Ռաֆիկի Շաբոյանին (23-01-01-05).

6) որպես ՌԲՖ ռազմադաշտային թերապիայի ամբիոնի պետ ընտրված համարել Վարդան Վիկտորի Ծատուրյանին (23-01-01-06).

7) որպես ուրուլոգիայի և անդրուլոգիայի ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Արեն Յուրիի Բաբլումյանին (23-01-01-07).

8) որպես ուրուլոգիայի և անդրուլոգիայի ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Արթուր Մկրտչի Գրաբսկուն (23-01-01-08).

2. Հանձնարարել իրավաբանական բաժնի պետին՝ քննարկելու և ներկայացնելու ամբիոն չհանդիսացող կրթական այլ ստորաբաժանումների ղեկավարների ընտրության հետ կապված իրավակարգավորումները՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով համապատասխան լրացում կամ փոփոխություն սահմանող իրավական ակտի նախագիծ (23-01-01-09).

3. Հաստատել «ՔՈԲՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի կանոնակարգի փոփոխությունները (կցվում է) (23-01-01-10).

4. Հաստատել Համալսարանի 2022-2023 ուսումնական տարվա կլինիկական օրդինատուրայի վճարովի համակարգում սովորողների վարձավճարների զեղչերի չափերը՝ անվանական կրթաթոշակառուներինը ուսման վարձավճարի 40, իսկ գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներինը՝ 20 տոկոսի չափով՝ (23-01-01-11).

5. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝



Ր. Գ. Դ., ՊՐՈՖ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ր. Գ. Դ., ՊՐՈՖ. Տ. Գ. ԱՎԱԳՅԱՆ